

## Արձանագրություն N 1-11/16

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2016 թ.-ի նոյեմբերի 9-ի նիստի

Ներկա էին՝ Թորքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Խաչատրյան Գ.Մ. (Ֆ.մ.գ.թ.), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Բաղունց Գ. Ռ., Զաքարյան Գ.Է. (ուսանող), Մնացականյան Հ.Գ. (ուսանող), Պետրոսյան Ա.Կ. (ուսանող), Աբաղյան Մ.Գ. (ուսանող), Ծատրյան Ս.Բ. (ուսանող), Առուշանյան Գ.Ա. (ուսանող)։

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ.դոկտոր-պրոֆեսոր.) և Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ.դոցենտ)։

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- 1.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ներքին անվտանգության ապահովման և պահակային ծառայության» կարգի մասին.
- 2.Շուշիի տեխնոլոգիական համալսարանի մագիստրոսական թեզերի (նախագծերի) թեմաների մասին.
- 3.Դիմումների քննարկում.
- 4.Այլ հարցեր.

**Լսեցին 1-**«Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ներքին անվտանգության ապահովման և պահակային ծառայության» կարգը ներկայացվեց գիտխորհրդի հաստատմանը (զեկուցող՝ Հ.Վ.Թորքմաջյան)։

**Որոշեցին 1-**Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ներքին անվտանգության ապահովման և պահակային ծառայության» կարգը։

**Լսեցին 2-** Ռեկտոր՝ Հ.Վ.Թորքմաջյանը գիտխորհրդին ներկայացրեց ՇՏՀ-ի մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի (նախագծերի) թեմաները։

**Որոշեցին 2-** Հաստատել ՇՏՀ-ի մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի (նախագծերի) թեմաները։

**Լսեցին 3-**Քննարկվեց ս.գ.թ., ԱրՊՀ-ի ավագ դասախոս՝ Մանուշակ Վլադիմիրի Մկրտչյանի կողմից ներկայացված «Զբաղվածության գենդերային հիմնախնդիրները ԼՂՀ-ում»

համառոտ դասախոսությունը և «Гендерная экономика» ուսումնամեթոդական ձեռնարկը:

**Որոշեցին 3-** Հավանություն տալ ս.գ.թ., ԱրՊՀ-ի ավագ դասախոս՝ Մանուշակ Վլադիմիրի Մկրտչյանի կողմից ներկայացված «Զբաղվածության գենդերային հիմնախնդիրները ԼՂՀ-ում» համառոտ դասախոսությանը և «Гендерная экономика» ուսումնամեթոդական ձեռնարկին և երաշխավորել տպագրության:

**Լսեցին 4.1-** Քննարկման ներկայացվեց ՇՏՀ-ի ճարտարապետ՝ Մանուշակ Տիտանյանին ավագ դասախոսի տարակարգ շնորհելու մասին հարցը (հիմք՝ ճարտարապետաշինարարական ֆակուլտետի խորհրդի 2016թ. հոկտեմբերի 26-ի նիստի որոշումը):

**Որոշեցին 4.1-** Հիմք ընդունելով ՇՏՀ-ի ճարտարապետաշինարարական ֆակուլտետի խորհրդի 2016թ. հոկտեմբերի 26-ի նիստի որոշումը, ճարտարապետ՝ Մանուշակ Տիտանյանին շնորհել ավագ դասախոսի տարակարգ: Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017թ. փետրվար ամսից (2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակից):

**Լսեցին 4.2-** «Նուռ» և «Ազնվամորի» ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքների մասին զեկուցումով հանդես եկան գ.գ. դոկտոր-պրոֆեսոր՝ Գ.Ա.Հակոբյանը և պրոռեկտոր՝ Պ.ՅՈՒ. Գասպարյանը:

**Որոշեցին 4.2-** Ընդունել ի գիտություն «Նուռ» և «Ազնվամորի» ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքների մասին տեղեկատվությունը:

**Նախագահ՝** ստորագրություն **Հ.Վ.Թորմաջյան**  
**Քարտուղար՝** ստորագրություն **Ա.Ա.Առաքելյան**